ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԱՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ-17/4-Տ

ք.Երևան «19» սեպտեմբերի 2017թ.

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն, ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մակինյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնքի 40 հա տարածք զբաղեցնող տնամերձերի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N – 1.1 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ էԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	<<ՀՀ նախագծերի պետական արտադերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Հալաբյան 19ա
ՓՆ աշխատակազմի գործառնական վարչություն	<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նաիրիի մասնաճյուղ
Հ/Հ 900011015402	Հ/Հ 24737002772100 10
ՀՎՀՀ 02555816	ՀՎՀՀ 01508665
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար	ekspertizaproektov@mail.ru, թեղ. 575431
	Տնօրեն
_____ Մ. ՄԱԿԻՆՅԱՆ	_____ Գ. ԱԲԱՅԱՆ

Հ. Տ. Հ.Տ.

Հավելված N 1
«19» սեպտեմբերի 2017 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ -17/4-Տ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
		ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնքի 40 հա տարածք զբաղեցնող տնամերձերի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություններ					
1	71351540/2	Տեխնիկական հսկողության ծառայություններ	դրամ	300 000	1	ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք	76 օր (2.5 ամիս կատարվելիք աշխատանքների ավարտը)

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնքի 40 հա տարածք զբաղեցնող տնամերձերի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների

1. **Տեխնիկական հսկողության հիմանական խնդիրները**

Տեխնիկական հսկողությունը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության 28.04.1998թ. N44 <<Շինարարական որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ>>-ի հիման վրա: Տեխնիկական հսկողության հիմանական խնդիրներն են՝ ապահովել աշխատանքների պահանջվող որակը, նրանց համապատասխանությունը նախագծանախահաշվային փաստաթղթերին, գործող նորմերին, ստանդարտներին և շինարարության մասին օրենքներին:

2. **Ընդհանուր դրույթներ**

- Ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացվելու է սկսած ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների մեկնարկի օրից մինչև ավարտված աշխատանքների հանձնման-ընդունման ակտի վավերացումը:
- Ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունն իրականացվելու է շինհրապարակի ամենօրյա այցելությամբ որոնք հաստատվում են տեխնիկական հսկողության մատյանում գրառումների կատարման միջոցով:
- Տեխնիկական հսկողությունն իրականացվելու է հսկողական ստուգումներով, որոնց ընթացքում պարզվում է կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, շինարարական նորմերին և կանոններին:

- Տեխնիկական հսկողությունն ապահովելու է կատարված աշխատանքների, օգտագործվող նյութերի, կոնստրուկցիաների որակը, կատարման տեխնոլոգիական պահանջներն ըստ գործող նորմերի և պետական ստանդարտների, ինչպես նաև աշխատանքային նախագծի տեխնիկական մասնագրերով նախատեսված պահանջների:

3. **Պարտականությունները**

- Պարբերաբար ստուգել բոլոր կատարված աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծային, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմանների:
- Ստուգել աշխատանքներում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկանտների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և վերլուծությունների արդյունքների գոյությունը և նախագծի ու ապրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում, արգելել դրանց օգտագործումը, այն ձևակերպելով համապատասխան ակտերով և նույն օրը ներկայացնել Պատվիրատուին:
- Կապալառուի կողմից վարվող աշխատանքների վարման ընդհանուր մատյանում նույն օրը կատարել գրառումներ հայտնաբերված թերությունների և դրանց վերացման վերաբերյալ:
- Մասնակցել հեղինակային հսկողության պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող աշխատանքների որակի ստուգումներին և հետևել հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը:
- Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմել նրանց ցանկը, սահմանել վերացման ժամկետները և անհապաղ գրավոր տեղյակ պահել Պատվիրատուին:
- Վարել աշխատանքների ընդհանուր մատյան, կանոնավոր կերպով գրանցել օրական կատարված աշխատանքների ընթացքը, իրերի, նյութերի քանակը և որակը:
- Իրականացնել կատարված աշխատանքների տեսակների ու ծավալների ընդունումը ակտերի ձևակերպման միջոցով, ծածկվող աշխատանքների ընդունման ակտերի ձևակերպման հետ մեկտեղ կատարել նաև կատարված աշխատանքների տեսաձայնագրություն:
- Նախագծային լուծումների փոփոխությունների անհրաժեշտության դեպքում գրավոր տեղյակ պահել Պատվիրատուին:
- Կապալառու կազմակերպության ներկայացուցիչների հետ համատեղ կազմել և վավերացնել վճարման ներկայացվող կատարողական ակտերը: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը պատասխանատու է կատարողական ակտերում բերված աշխատանքների ծավալների և շինարարության որակի համար:
- Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում
- Կազմել ամսական հաշվետվություններ ներկայացնել Պատվիրատուին:

4.**Իրավասությունները**

- Աշխատանքներ իրականացնող կազմակերպությանը տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ և հրահանգներ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ:
- Թերությունների հայտնաբերման դեպքում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ կառույցների կայունության և հուսալիության վրա, չթույլատրել շարունակել շինարարությունը՝ տեղյակ պահելով Պատվիրատուին:
- Արգելել պետական ստանդարտներին, տեխնիկական պայմաններին և այլ նորմատիվային փաստաթղթերին չհամապատասխանող նյութեի, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների օգտագործումը,
- Չընդունել հաստատված նախագծերի, տեխնիկական պայմանների, շինարարական նորմերի և կանոնների խախտումներով անորակ նյութերով, շինվածքներով կամ կոնստրուկցիաներով կատարված աշխատանքները,
-

5Կատարվելիք աշխատանքների համառոտ նկարագիրը:

<< Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնքի 40 հա տարածք զբաղեցնող տնամերձերի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների կատարում: (Նախագծի մանրամասն նկարագրությունը Տեխնիկական մասնագրարում կցվում է):

Նշված աշխատանքների համար կազմված է նախագծանախահաշվային փաստաթղթեր, որոնց հիման վրա պետք է իրականացվեն աշխատանքները:

6. Շինարարության տեխնիկական հսկողության կատարման ժամկետը

Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի կատարվող աշխատանքներին զուգընթաց: Տեխնիկական վերահսկողին վճարումները կկատարվեն աշխատանքների կատարողական ակտերով ներկայացված

Աշխատանքի կատարման ժամկետը 2017թ	
սկիզբը	ավարտը
Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	կատարվելիք աշխատանքներին զուգահեռ - 76 օր (2.5 ամիս)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ էԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011015402
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

_____ Մ. ՄԱԿԻՆՅԱՆ

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
Հալաբյան 41ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նաիրիի մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665
ekspertizaproektov@mail.ru, հեռ. 575431
Տնօրեն

_____ Գ. ԱՐՇԱԿՅԱՆ

Կ.Տ.

Հավելված N 1.1
« 19 » սեպտեմբերի 2017 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ -17/4-Տ ծածկագրով պայմանագրի

<<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 40ՀԱ ՏԱՐԱԾՔ ՋՐԱՂԵՑՆՈՂ ՏՆԱՄԵՐՁԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ>>
օբյեկտի նախատեսված անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացումից շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Վերականգնվող հատվածներ	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Ասֆալտբետոնե ծածկույթ	5
Պոլիէթիլենե խողովակաշար	50
Պողպատե խողովակաշար	30
Միաձույլ բետոնե կառուցվածք	20
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածք	30

օբյեկտի նախատեսված անհապաղ վերականգնողական աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի և կոնստրուկցիաների նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկ

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Համապատասխանեցման սերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Խիճ	այո	30
Ավազ	այո	30
Պոլիէթիլենի նյութ	ոչ	15
Պողպատ	այո	50
Բիտում	այո	10
Բիտումապոլիմերային մածիկ	այո	10

օբյեկտի նախատեսված անհապաղ վերականգնողական աշխատանքները իրականացնող կապալառու կազմակերպության նվազագույն երաշխիքային ժամկետներ

Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացված աշխատանքներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վազգենանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011015402
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար
________ Մ. ՄԱԿԻՆՅԱՆ
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
Հալաբյան 41ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նաիրի մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665
ekspertizaproektov@mail.ru, հեռ. 575431
Տնօրեն
________ Գ. ԱՐՇԱԿՅԱՆ
Կ.Տ.

Հավելված N 2
«19» սեպտեմբերի 2017 թ. կնքված
ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ -17/4-Տ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**				
		ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնքի 40 հա տարածք զբաղեցնող տնամերձերի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351540	Տեխնիկական հսկողության ծառայություններ	300 000	300 000	300 000	300 000	300 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011015402
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի աշխատակազմի ղեկավար

_____ Մ. ՄԱԿԻՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

<<ՀՀ նախագծերի պետական արտաքերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
Հալաբյան 41ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նաիրիի մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665
ekspertizaproektov@mail.ru, հեռ. 575431
Տնօրեն

_____ Գ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հավելված 3
« 19 » սեպտեմբերի 2017թ. կնքված
ՀՀԷԵՊՆՋՏՊԿ-ԳՀՄՁԲ -17/4-Տ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2017թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2017թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017թ. դուրս գրված N_____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ-ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
	Կ.Տ.

Հավելված 3.1
«19» սեպտեմբերի 2017 թ. կնքված
ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-ԳՀԾՁԲ -17/4-Տ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն